

**Ռուբեն Մելիքյան**  
**ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի**  
**ամբիոնի դոցենտ,**  
**ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ.**  
**թեկնածու**

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**  
**ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**  
**ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

ՀՀ քրեական դատավարությունը ներկայումս գտնվում է համարձակու համակողմանի բարեփոխման գործընթացում: Այդ գործընթացի առաջին կարևոր հանգրվանը 2011թ. մարտի 10-ի որոշմամբ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի» հաստատումն էր, որի 9-րդ կետը (բաժինը) նվիրված է դատական վերանայման հիմնահարցերին: Գործընթացի հաջորդ կարևոր հանգրվանը նույն տարվա հոկտեմբերին Հայեցակարգի հիման վրա մշակված՝ Օրենսգրքի ընդհանուր մասի նախագծի հրապարակումն էր: ՀՀ քրեական դատավարության բարեփոխման արդի ակտիվ շրջանում դատական վերանայման հիմնախնդիրները խորությամբ ընկալելու համար, նախ, անհրաժեշտ է զարգացման մեջ դիտարկել ՀՀ քրեադատավարական իրավունքի մեջ այդ ինստիտուտի հիմքում ընկած տրամաբանությունը: Այս դիտանկյունից ՀՀ դատական վերանայման համակարգի զարգացման մեջ կարելի է առանձնացնել չորս մոդելային փուլեր:

Առաջին մոդելը («խորհրդային մոդել») գործել է ՀՀ անկախացումից մինչև ՀՀ 1998թ. քրեական դատավարության օրենսգրքի կիրարկումը՝ 1999թ. հունվարը: Այդ ընթացքում շարունակել է գործել ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգիրքը և դրա հիմքում ընկած՝ դատական վերանայման խորհրդային մոդելը: Այս մոդելը հիմնվում էր երկօղակ դատական համակարգի վրա (ժողդատարաններ և գերագույն դատարան), և ընդգրկում էր վերանայման մեկ սովորական եղանակ՝ «խորհրդային վճռաբեկությունը», և երկու բացառիկ եղանակ՝ հսկողական վարույթը և նոր երևան եկած հանգամանքներով վարույթը: ՀՀ դատական վերանայման երկրորդ մոդելը ձևավորվել է ՀՀ 1998թ. քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա և գործել է մինչև 2006-2007թթ.: 1998թ. օրենսգրքով փորձ կատարվեց ՀՀ դատական ու դատավարական համակարգերում անցում կատարել դեպի դասական եվրոպական հայեցակարգերը: Այս մոդելը հիմնվում էր արդեն եռօղակ դատական համակարգի վրա (առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան և վճռաբեկ դատարան), և ընդգրկում էր վերանայման երկու

սովորական եղանակ՝ վերաքննությունը և վճռաբեկությունը: Բացառիկ եղանակների կազմը սկզբ նական շրջանում անփոփոխ էր, իսկ 2005թ. փետրվարի 2-ից, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-57-Ն օրենքով, համալրվեց բացառիկ վերանայման ն որ եղանակով՝ նոր հանգամանքներով վարույթով: Բացառիկ վերանայումն իրականացվում էր միայն երրորդ օղակի դատարանում: Երրորդ մոդելը սկսել է ձևավորվել 2006թ. օգոստոսի 5-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-152-Ն օրենքով: Այս մոդելի հիմքում ընկած տրամաբանության վերջնական օրենսդրական կենսագործումը տևեց ավելի քան մեկ տարի, և մոդելի հայեցակարգն ամբողջացավ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն օրենքով, որն ուժի մեջ մտավ 2007թ. դեկտեմբերի 27-ին: Երրորդ մոդելը գործեց մինչև 2009թ. մարտի 1-ը: Այս մոդելի շրջանակներում դա սական եվրոպական հայեցակարգը ենթարկվեց արմատական փոփոխության.

1. Վերանայման սովորական եղանակների կազմից դուրս բերվեց վճռաբեկությունը՝ այն վերափոխելով բացառիկ եղանակի,

2. Վերանայման միակ սովորական եղանակը վերակարգավորվեց որպես սահմանափակ վերաքննության կառուցակարգ. վերաքննիչ դատարանը զրկվեց սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ հավաքելու, ինչպես նաև առաջին ատ յանի դատարանում հետազոտված ապացույցները վերստին հետազոտելու հնարավորությունից: Բացի այդ, վերաքննիչ դատարանը կաշկանդվեց բողոքում բերված հիմքերով ու հիմնավորումներով:

3. Բացառիկ վերանայման տրամաբանությունը դադարեց միասնա-կան լինելուց. ըստ էության, ամրագր վեցին բացառիկ վերանայման երկու տեսակի կառուցակարգեր՝ (ա) վճռաբեկությունը, որը կենսագործվում էր երրորդ օղակի դատարանում և առաջին հերթին կոչված էր ապահովել նախադեպային իրավաբանության (արդարադատության) իրականացումը, և (բ) նոր երևան եկած ու նոր հանգամանքներով գործի նորոգումը, որն իրականացվում էր առաջին օղակի դատարանում: Բացի այդ, «հսկողական վարույթը», որպես բա ցառիկ վերանայման եղանակ, վերացվեց, իսկ դրա փոխարեն սկսեց ձևավորվել «հիմնարար խախտման հիմքով» բացառիկ վերանայման կառուցակարգը

1: Եվ վերջապես, ներկայում գործող մոդելը՝ դատական վերանայման չորրորդ մոդելը , ձևավորվել է 2009թ. մարտի 1-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-45-Ն օրենքի հիման վրա: Այս մոդելի շրջանակում մասնակի վերադարձ կատարվեց երկրորդ մոդելի տրամաբանությանը, սակայն երրորդ մոդելի որոշ տարրեր

պահպանվեցին: Այսպես, վճռաբեկությունը վերստին վերակազմակերպվեց որպես վերանայման սովորական եղանակ, սակայն վերաքննության էության հարցում նախորդ մոդելի տրամաբանությանը վերադարձ չկատարվեց. ներկայում վերանայման առաջին սովորական եղանակը շարունակում է գործառնել սահմանափակ վերաքննության կառուցակարգի ներքո: Ինչ վերաբերում է բացառիկ վերանայման եղանակներին, ապա չորրորդ մոդելի շրջանակներում վերականգնվեց դրանց միասնական տրամաբանությունը, ինչպես նաև գտնվեց բացառիկ վերանայման կազմակերպման նոր ինստիտուցիոնալ լուծում. այդ գործառույթի իրականացումը ոչ թե վերապահվեց դատական համակարգի որևէ օղակի (վերին օղակ՝ առաջին և երկրորդ մոդելների պարագայում, կամ ստորին օղակ՝ երրորդ մոդելի պարագայում), այլ ամրագրվեց «գումարած մեկ» սկզբունքը: Այսինքն՝ բացառիկ վերանայումն իրականացնում է այն դատարանը, որից մեկ օղակ ցածր դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել:

Բացի այդ, բացառիկ վերանայման համակարգ վերջնականապես ներգրավվեց «հիմնարար խախտման հիմքով» վերանայումը: Ընդ որում, դրա տրամաբանությունը ներդաշնակվեց նոր երևան եկած և նոր հանգամանքներով վերանայման եղանակների տրամաբանությանը:

Այսպիսով՝ չորրորդ մոդելի շրջանակներում ՀՀ դատական վերանայման համակարգը կազմված է դատական վերանայման երկու սովորական և երեք բացառիկ եղանակներից:

Դատական վերանայման հայաստանյան քրեադատավարական համակարգի զարգացման ընթացքի վերլուծությունը վկայում է դրական

1 Հիմնարար խախտման հիմքով դատական վերանայման կառուցակարգային կողմը սահմանվեց օրենսգրքի 21-րդ հոդվածում՝ որպես կրկին դատվելու սկզբունքից իրավաչափ շեղման եղանակ: Այնուհանդերձ, դրա ընթացակարգային կողմի ամրագրումը դեռևս բավարար որոշակի չէր:

դինամիկայի մասին: Հայաստանյան օրենսդրին հաջողվել է ապահովել դատական վերանայման քրեադատավարական համակարգում մայրցամաքային-եվրոպական հայեցակարգերի կառուցվածքային ներդրումը և ընդհանուր առմամբ ապահովել դրանց գրագետ կենսագործումը: Այս միտումից որոշակի շեղում էր ներկայացնում վերը

նշված երրորդ մոդելը, սակայն, բարեբախտաբար այդ շեղումը շտկվեց չորրորդ մոդելի շրջանակներում: Այս առումով դատական վերանայման քրեադատավարական փուլերը շահեկանորեն տարբերվում են ՀՀ քրեական դատավարության մյուս փուլերից, առաջին հերթին՝ մինչդատական փուլերից, որոնց կառուցվածքը դեռևս չի հաջողվել համապատասխանեցնել մայրցամաքային «մայր» հայեցակարգերին, և դրանք շարունակում են հիմնված մնալ խորհրդային իրավունքի տրամաբանության վրա<sup>1</sup>: Այսպես, առաջին, վերաքննության կառուցակարգի ամբողջական ներդրումը լիովին համապատասխանում է դատական վերանայման ռոմանագերմանական տեսությանը, համաձայն որի՝ ցանկացած քրեական գործով անձը պետք է հնարավորություն ունենա վիճարկելու իր դատավճռի փաստական, ապացուցողական կողմը: Այս հնարավորությունից անձը կարող է զրկվել միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանում իր իսկ ազատ կամարտահայտությամբ կիրառվել են վարույթի կրճատման ընթացակարգեր (ներկայումս ՀՀ-ում գործող օրենսդրությամբ նախատեսված դատական քննության արագացված վարույթ), և անձի մեղավորության վերաբերյալ ապացույցների հետազոտում չի անցկացվել: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարությունում վերաքննության ամբողջական ներդրումը նախատեսվում է իրականացնել միայն 2013 թվականից: Մինչ այդ, դասական վերաքննություն կիրականացվի միայն նվազ վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ հաշտարար դատարանների կայացրած դատավճիռների նկատմամբ: Իսկ առավել ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով ՌԴ-ում գործող դատական վերանայման ներկա մոդելի շրջանակներում վերաքննությունը բացակայում է<sup>2</sup>: Մինչդեռ, հայաստանյան օրենսդիրն այս խնդիրն,

1 Դրա մասին է վկայում, օրինակ, մինչդատական վարույթում բուն խորհրդային էություն ունեցող սուբյեկտի՝ քննիչի առկայությունը և կենտրոնական դերը՝ որպես քննության գործառույթ իրականացնող մարմին: Ընդ որում, քննիչը չունի դատական մագիստրատի կարգավիճակ, և նրա դատավարական գործունեության օրինականությունը հսկվում է դատախազի կողմից:

2 Տե՛ս Разинкина А. Н. Апелляция в уголовном судопроизводстве, М., 2004, 88-107 էջեր:

ըստ էության ճիշտ լուծել է դատական վերանայման երկրորդ մոդելով՝ 1999 թվականից: Ավելին, դատավարական տնտեսման սկզբունքից ելնելով՝ լրիվ վերաքննության կառուցակարգը հետագայում փոխարինվել է սահմանափակ վերաքննության կառուցակարգով

(երրորդ մոդելի շրջանակում), ինչը ևս զարգացման, ըստ էության ճիշտ միտում էր:

Երկրորդ, դատական վերանայման երկրորդ մոդելի շրջանակում ներդրված «մաքուր» վճռաբեկության կառուցակարգն, ըստ էության համապատասխանում է մայրցամաքային ավանդույթին՝ նախանշելով բեկումնային տարանջատումը դատական վերանայման խորհրդային տրամաբանությունից՝ իր անկյունաքարային «խորհրդային վճռաբեկությամբ» հանդերձ: Մայրցամաքային, դասական վճռաբեկության կանոնի ոգով՝ դեռևս երկրորդ մոդելի շրջանակներում սահմանվել է, որ վճռաբեկության շրջանակներում նոր ապացուցում, փաստական հանգամանքների ապացուցողական վերստուգում չի իրականացվում: Ընդ որում, թե՛ օրենսդրական և թե՛ գործնական մակարդակներում հայրենական վճռաբեկության այս բնութագրիչի հետևողական կենսագործումը տարիներ է պահանջել: Այնուհանդերձ, 2009-2011 թվականներին ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ վճռաբեկության կառուցակարգը գործադրելիս այլևս չի իրականացվում գործի ըստ էության քննություն, և եթե ստորադաս դատարանների դատական ակտերի հիմքում դրված փաստական կամ ապացուցողական համակարգերում խտտան է վերհանվում, ապա դատական սխալի ուղղումը կատարվում է ոչ թե դատական ակտը փոփոխելու, այլ բեկանելու ու ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու ճանապարհով<sup>1</sup>:

1

Վճռաբեկության մայրցամաքային տեսությանը չի հակասում այն դեպքը, երբ վճռաբեկության արդյունքում ստորադաս դատական ակտերը բեկանվում են և գործով վարույթը կարճվում է: Դա հնարավոր է այն պարագայում, երբ վճռաբեկության արդյունքներով պարզվում է, որ գործի փաստական-ապացուցողական համակարգերի խտտանն այնքան հիմնարար է, որ խաթարվում է գործի ողջ փաստական-ապացուցողական հիմքը՝ բերելով ամբաստանյալի արդարացման:

Օրինակ՝ Ա.Սարգսյանի վերաբերյալ ԵԲՐԴ/0295/01/08 գործով 2009թ. սեպտեմբերի 16-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանեց ապացույցների անթույլատրելիության «թունավոր ծառի պտուղների» կանոնը՝ դրանով հանգեցնելով գործի ողջ փաստական-ապացուցողական հիմքի չեզոքացման: Այս պայմաններում վճռաբեկ դատարանը, բեկանելով բողոքարկվող դատական ակտերը, ոչ թե գործը վերադարձրեց ստորադաս դատարան՝ նոր քննության, այլ վարույթը արդարացման հիմքով կարճեց:

Վճռաբեկության մասով կարևոր է ընդգծել հայաստանյան օրենսդրի մեկ այլ գրագետ լուծում ևս. այն է՝ վճռաբեկ ատյանի միասնականության տեսության կենսագործումը: Վերանայման խորհրդային համակարգում վճռաբեկությունը և դրա հայելային պատճենումը՝

հսկողական վերանայումը (որպես դատական վերանայման բացառիկ եղանակ) իրականացվում էին բազմաթիվ դատակա ն օղակների կողմից խորհրդային միության, միութենական հանրապետության, ինքնավար հանրապետության, մարզի և այլ մակարդակներում: Դրա հետևանքով, օրինակ, վերանում էր կոնկրետ-ինցիդենտայի ն, կազուսային հիմքով օրենքի միատեսակ կիրառության գործառույթի իրականացման հնարավորությունը<sup>1</sup>: Յենց այդ պատճառով էլ ներդրվեց դատական իրավաբանության բուն էությանը ոչ բնորոշ ղեկավար պարզաբանումների նորմատիվային ինստիտուտը, որը, փաստորեն, վճռա բեկ ատյանի միասնականության բացակայության արդյունք էր: ԶՅ-ում վճռաբեկ ատյանը միասնական է, ուստի լիովին օրինաչափ է, որ դատական վերանայման երրորդ մոդելի շրջանակներում վերականգնվել է կազուսային հիմքի վրա օրենքի միատեսակ կիրառության գործառույթը՝ 2005թ. իրականացված Սահմանադրական փոփոխությունների արդյունքում այն վերապահելով միասնական վճռաբեկ ատյանին՝ ԶՅ վճռաբեկ դատարանին: Մինչդեռ, օրինակ, ՌԴ-ում այդ հարցը մինչ օրս լուծված չէ, ուստի վրա օրենքի միատեսակ կիրառության գործառույթը, կազուսային դրսևորման փոխարեն, շարունակում է կրել դեռևս խորհրդային իր ավաբանությունից ժառանգած նորմատիվային բնույթ<sup>2</sup>: Երրորդ, հայաստանյան օրենսդրին հաջողվել է դատական վերանայման համակարգը ձերբազատել մայրցամաքային դատական վերանայման տրամաբանության մեջ ոչ մի կերպ չտեղավորվող հսկողական վերանայման ինստիտուտից, որի մշակումը պայմանավորված էր խորհրդային դատավարագիտության կողմից վերաքննության մերժման պատճառով առաջացած վերանայման եղանակների դիֆիցիտը լրացնելու անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ բացառիկ վերանայման այդ եղանակի համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից Յոթերորդ արձանագրության 4-րդ հոդվա-

1Տե՛ս Головки Л . В . Новеллы УПК РФ: прогресс или институциональный хаос ? / Апелляция, кассация , надзор : новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления, под общ . ред. Н . А . Колоколова, М ., 2011, էջ 48:

2Տե՛ս Головки Л. В . նույն տեղում:

ծին (կրկին դատվելու անթույլատ րելիություն) Ստրասբուրգի դատարանում շարունակաբար քննարկման առարկա է դառնում 1: Խնդիրն այն է, որ հսկողական վարույթի շրջանակներում դժվար է ապահովել բացառիկ վարույթներին բնորոշ՝ հանրային և մասնավոր

շահերի արդարացի հավասարակշռությունը: Այսպես, մի կողմից անհրաժեշտ է ապահովել, որ օրինական ուժի մեջ մտած դատա կան ակտերն ունենան իրավական կայունության առավել մեծ պաշար, իսկ մյուս կողմից՝ որ հիմնարար խախտումներ պարունակող դատական ակտերը հնարավոր լինի բեկանել: Մինչդեռ հսկողական վերանայումը, կրկնելով վճռաբեկության հիմքերը, ինստիտուցիոնալ հնարավորություն չի տալիս հավաստիանալ, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման հիմքը հիմնարար բնույթի խախտումն է: Այս առումով լիովին օրինաչափ է երրորդ մոդելի շրջանակներում հսկողական վերանայման փոխարինումը հիմնարար խախտման հիմքով վերանայման կառուցակարգով: Վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ դատական վերանայման քրեադատավարական համակարգի բարեփոխման տրամաբանությունը պետք է հանդիսանա և հանդիսանում է ոչ թե նոր համակարգային լուծումների մշակումը և ներդրումը, այլ արդեն իսկ գոյություն ունեցող դրական միտումների զարգացումը, շեշտադրումը, խմբագրումը և ամբողջացումը: Այս առումով՝ բարեփոխման շրջանակներում իրավական ներգործության որոշ հիմնական ուղղություններ հանգում են հետևյալին.

1. Վերաքննության գործառույթի ամբողջացում (Չայեցակարգի 9.3-9.4 ենթակետեր): Երկրորդից երրորդ մոդելին անցման շրջանում վերաքննության կառուցակարգը ենթարկվեց արմատական ռեֆորմի՝ լրիվ վերաքննությունից անցում կատարվեց սահմանափակ վերաքննության, և այդ եղանակով վերանայում իրականացնող դատարանը կաշկանդվեց բողոքի հեղինակով, հիմքերով, առարկայով, փաստարկմամբ, ապացույցների շրջանակով 2: Փաստորեն, մի ծայրահեղությունից անցում կա-

1

Տե՛ս, օրինակ, Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով (գանգատ թիվ 50178/99) Եվրոպական դատարանի 2004թ. հուլիսի 20-ի վճիռը, 37-39-րդ, 45-րդ կետեր, Ֆադինն ընդդեմ Ռուսաստանի (գանգատ թիվ 58079/00) 2006թ. հուլիսի 27-ի վճիռը, 30-37-րդ կետեր, Բրատյակի նմ ընդդեմ Ռուսաստանի գործով (գանգատ թիվ 72776/01 ) 2006թ. մարտի 9-ի որոշումը:

2

Տե՛ս Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն , Եր., 2010, 317-319 էջեր:

տարվեց մյուսին: Այսպիսով, բարեփոխման խնդիրն է հավասարակշռել քննության սահմանները վերաքննիչ վարույթում՝ ապահովելով, որ, մի կողմից, կողմերը հետևողական ու նախանձախնդիր լինեն և իրենք

ներկայացնեն ու հիմնավորեն իրենց շահե ընդ ոտնահարող դատական սխալների առկայությունը («երրորդ մոդելի» գերխնդիր), իսկ մյուս կողմից, որպեսզի հիմնարար բնույթի կողմերի չփաստարկած խախտումների դատական հայտնաբերումը անարձագանք չմնա («երկրորդ մոդելի» գերխնդիր): Անհրաժեշտ է նշել, որ Գ.Յամբարձումյանի և մյուսների վերաբերյալ ԵԿԴ/0211/01/10 գործով Վճռաբեկ դատարանի 2011թ. հունիսի 13-ի որոշմամբ անդրադարձ կատարվել է այս հիմնախնդրին և սահմանվել են այն խախտումները, որոնց հայտնաբերման պարագայում վերանայող դատարանը պետք է իրավունք ունենա վերացնել դրանք<sup>1</sup>:

2. Երկրորդ ատյանի դատարանում վարույթի տարբերակում (Չայեցակարգի 9.6 ենթակետ): Վերաքննիչ դատարանում գործի քննության միասնական ընթացակարգի պահպանումը աննպատակահարմար է, քանի որ եթե վերաքննիչ դատարանի առջև չի բարձրացվել գործի փաստական-ապացուցողական կողմը վերանայելու խնդիր, ապա վերաքննությանը բնորոշ բարդ ու ծախսատար կառուցակարգը գործադրելու անհրաժեշտություն չկա: Ամենևին պատահական չէ, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ օրենքի ակտիվ մեկնաբանման եղանակով փորձեց կարգավորել այս խնդիրը՝ լեգալացնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում այդ ժամանակ արդեն իսկ արմատավորված այն պրակտիկան, որ գործերը քննվում են կաԲՄ վերաքննության, կաԲՄ Վճռաբեկության ընթացակարգով<sup>2</sup>: Այս խնդրի օրենսդրական կարգավորումը, բնականաբար ավելի նախընտրելի է, քանի որ այն կարող է առավել ընդգրկուն և ամբողջական լինել, ինչպես նաև ապահովել Վճռաբեկության կարգի (պարզեցված կարգի) անհիմն կիրառման դեմ առավել բարձր երաշխիքներ: Մասնավորապես, վերաքննության կարգով (սովորական կարգով) գործի քննության պարագայում, մայրցամաքային հայեցակարգերի տրամաբանությանը համապատասխան, դատարանը չպետք է հնարավորություն ունենա գործը բեկանելով ուղարկել ստորա-

1

Խոսքը մասնավորապես վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով և 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով սահմանված հիմքերին: Տե՛ս նշված որոշման 10-17-րդ կետերը: 2Տե՛ս Գ.Յախնազարյանի վերաբերյալ ԵԲԴԴ/0219/01/08 գործով Վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 29-ի որոշման 11-19-րդ կետերը: դաս դատարան, այլ հենց ինքը պետք է վերջնական (գործի ապացուցողական-փաստական համակարգի ամբողջացման իմաստով) լուծում տա գործի էությանը<sup>1</sup>: Միակ բացառությունը կարող է վերաբերել դասական ֆրանսիական էվոկացիայի ինստիտուտին, երբ վերաքննության կարգով գործի քննության արդյունքում չեղյ ալ է համարվում առաջին ատյանի դատարանում կատարված



ապացուցումը (օրինակ՝ չի ապահովվել ամբաստանյալի իրավունքն ունենալ թարգմանիչ): Էվոկացիայի էությունն այն է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է գործով իրականացնել նոր ամբողջական ապացուցում: Սակայն մենք կարծում ենք, որ այդ ինստիտուտի կիրառումը նպատակահարմար չէ, և վերաքննիչ դատարանը պետք է պարտավոր լինի դատական ակտը բեկանելով գործն ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության: Հակառակ դեպքում չի կարող ապահովվել վերաքննության իրավունքը էվոկացիայի արդյունքում կայացված դատական ակտի նկատմամբ:

3. Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական վերանայման եղանակների միաձուլում (Հայեցակարգի 9.2 ենթակետ): Երբ նոր հանգամանքներով վարույթի նորոգմա ն ինստիտուտը ներմուծվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, այն ձևակերպվեց որպես դատական վերանայման ինքնուրույն եղանակ: Ընդ որում, նոր հանգամանքներով վերանայման կառուցակարգը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ավանդական կառուցակարգից զանազանման հիմքում դրվեց ոչ թե ընթացակարգային, այլ նյութական չափանիշը, այն է՝ նոր հանգամանքները վերաբերում են նոր իրավական, իսկ նոր երևան եկած հանգամանքները՝ նոր փաստական իրականության առաջացմանը: Մեր կարծիքով՝ այս բաժանումը պայմանական է, քանի որ.

ա/ նոր երևան եկած գրեթե բոլոր հանգամանքները ունեն համակց-ված իրավական-փաստական բնույթ, քանի որ հաստատվում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

բ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը, որպես նոր հանգամանք, ևս ունի համակցված իրավական-փաստական բնույթ, քանի որ դրանով կարող են գնահատական տրվել գործի փաստերին: Օրինակ՝ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Ստրասբուրգի դատարանը, հաստատված ճանաչելով դիմումատուի նկատմամբ խոշտանգման փաստը, այնուհետև նշել է, որ «անկախ նրանից, թե ինչ ազ-

1

Տե՛ս Головки Л. В . նշված աշխատությունը, 54-56 էջեր:

դեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում»<sup>1</sup>:

4. Հիմնարար խախտման հիմքերի շարադրում (Հայեցակարգի 9.17 ենթակետ): Հիմնարար խախտման հիմքով դատական վերանայման ե-

դանակի կայացումը դեռ ավարտին չի հասել, քանի որ գործող օրենսգրքում այդ հիմքերի ձևակերպումը խիստ ընդհանրական է և անորոշ<sup>2</sup>: Նոր օրենսգրքի խնդիրն է մեծացնել այդ հիմքերի օրենսդրական ձևակերպման որոշակիությունը՝ ապահովելով դատական վերանայման այս եղանակի վերջնական կայացումը և խորհրդային հսկողական վարույթից դրա սահմանազատումը: Անփոփելով՝ կարող ենք եզրահանգել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում դատական վերանայման համակարգի կանոնակարգումը պետք է հիմնված լինի բարեփոխումների շարունակականության և հանընթաց խորացման սկզբունքի վրա:

1

Տե՛ս Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ թիվ 36549/03)Եվրոպական դատարանի 2007թ. հունիսի 28-ի վճիռը, կետ 66:

2 «... [Ն]ախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը» (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս):

**Ruben Melikyan**  
**Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU**  
**Deputy Minister of Justice of the RA,**  
**Candidate of Legal Sciences, Docent**

**CERTAIN ISSUES OF JUDICIAL APPEALS SYSTEM REFORMING IN  
ARMENIAN CRIMINAL PROCEDURE**

The Article aims finding and suggesting productive ways of reforming the Judicial Appeals System in Armenian Criminal Procedure. For understanding the current situation the past models are analyzed in details and the logic of development is shown.

In particular, the author concludes that there have been 4 models of Judicial Appeals System in Armenian Criminal Procedure since Armenian Independence and, basing on analysis of each of them, he comes to the conclusion that in general terms the System has been slowly moving from Soviet legal tradition to Continental principles of Appellate Review. New concepts of Appeal on matters of fact (as a new mechanism of appeal proceedings), the Unified Cassation mechanism, as well as removal of Nadzor mechanism are particularly valued and praised.

As actual objectives of the new reform are named:

1. Logical finalization of the mechanism of Appeal on matters of fact. In particular, it's suggested to enlarge the boundaries of review by allowing the Appellate court to correct the errors of fundamental nature. This proposal sets balance in margin of appreciation within the mechanism of Appeal on matters of fact.
2. Differentiation of procedures on the second level of Judicial System. This proposal aims increasing effectiveness of the Court of Appeals by means of redistributing the procedural resources between appeals on matters of fact and law, on one hand, and on matters of law only, on the other hand.
3. Unifying procedures of newly discovered circumstances and new circumstances. This will make the system logically consistent.
4. Defining the grounds of fundamental errors. This proposal has vast importance in the light of criterion of clarity of law. More clearly defined grounds will bar reopening procedures in genuine situations and thus will serve as a guaranty of Non bis in idem principle.